ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երեւան, 0009, Կորյուն 15, հեռ. (37412) 77 77 25
Koryun Street 15, 0009, Yerevan, Republic of Armenia, tel. (37412) 77 77 25

01/3642-2024
14.11.2024թ.

ՀԱՆՐԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐՆԵՐԻՆ

ՀՀ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԵՐԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐՆԵՐԻՆ
(ԸՍՏ ՑՈՒՑԱԿԻ)

Հարգելի՝ գործընկերներ,

Տեղեկացնում եմ, որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով), իր գործառույթների շրջանակներում մշակում է հակակոռուպցիոն կրթական և հանրային իրազեկման բարձրացման ծրագրեր և իրականացնում է միջոցառումներ, որոնց համատեքստում, հանրային ծառայողների շրջանում, նախատեսվում է կազմակերպել խաղ-մրցույթ՝ հիմնված Հանձնաժողովի կողմից հաստատված՝ «Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների» և հանրային ծառայության բարեվարքության համակարգի տարրերին վերաբերելի՝ «Հանրային ծառայության մասին» օրենքի համապատասխան հոդվածների կարգավորումների վրա: Մրցույթն իրականացվելու է «Կորիզ» կրթական ծրագրի հետ համագործակցությամբ:

Խաղ-մրցույթն անցկացվելու է 2024 թվականի նոյեմբերի 20-30-ը՝ մոբայլ հավելվածի միջոցով՝ թեստային հարցերի եղանակով, իսկ դեկտեմբերի 9-ին՝ Կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային օրվան նվիրված միջոցառումների շրջանակներում տեղի կունենա խաղ-մրցույթի արդյունքների ամփոփումը և հաղթող ճանաչված հանրային ծառայողների լավագույն տասնյակի մրցանակաբաշխությունը:

Հայցում եմ Ձեր աջակցությունը՝ Ձեր գերատեսչություններում և ենթակայությամբ գործող մարմիններում միջոցառման վերաբերյալ հանրային ծառայողներին իրազեկելու և մրցույթի մասնակցության ապահովման հարցում: Խնդրում եմ սույն գրության վերաբերյալ տեղեկատվությունը հանրային ծառայողներին տրամադրել մինչև 2024 թվականի նոյեմբերի 18-ը ներառյալ՝ նախապես գրանցվելու նպատակով: Մրցույթի անցկացման կարգը, պայմանները և դրույթները ներկայացված են կից հավելվածում:

Առդիր՝ 1 նիշք:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ 2024-11-14 10:01:56 GMT+4 Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից eID **ԴԱՎԻԹ ՄԿՈՅԱՆ**

Կատ.՝ Ռուբեն Զաքարյան
ԿՀԻԾՄ վարչության գլխ. մասնագետ
Հեռ.՝ 012777723

Հավելվածի ներբեռնման կանոնակարգ

Քայլերի հերթականությունը վիդեո տարբերակով, այստեղ՝
https://www.youtube.com/watch?v=9py0lyqw4FM

Քայլ 1.

Բացել այս փաստաթուղթը հեռախոսով:

Քայլ 2. Ներբեռնել Koreez հավելվածը

Եթե ձեր հեռախոսը **Android** համակարգով է (Samsung, Xiaomi, Redmi, Huawei և այլն), անցեք այս հղումով՝
Koreez - Apps on Google Play

Եթե հեռախոսը **iOS** համակարգով է (iPhone), անցեք այս հղումով՝
Koreez on the App Store

Քայլ 3. Ակտիվացնել «Կոռուպցիայի Կանխարգելման Հանձնաժողով»-ի Մրցույթը

Հավելվածը ներբեռնելուց հետո ԿԿՀ մրցույթը տեսնելու համար **պարտադիր է** սեղմել հետևյալ հղման վրա, որը ձեզ կտանի դեպի Koreez հավելված:
https://www.koreez.am/cpc

Քայլ 4. Ստեղծել օգտատեր

Խաղում՝ սեղմեք **«Սկսել նոր խաղ»**, ապա լրացրեք կամայական անուն: Համընկնումներից խուսափելու համար, անունը գրելիս ցանկալի է օգտագործել *սիմվոլներ և/կամ նշաններ*:
Այնուհետև **«Ընտրիր դասարանը»** էջում սեղմեք **«Բաց թողնել»** կոճակը (տե՛ս նկարում):



Ուշադրություն՝

Գրանցումն անանուն է, հարթակից օգտվող ոչ մի օգտատեր չի կարող ձեզ նույնականացնել:

Քայլ 5. Գրանցել հեռախոսահամար

Koreez հավելվածի օգտատիրոջ անձնական էջից՝ տե՛ս նկարում, սեղմեք **«Գրանցել հեռախոսահամար»** և ներմուծեք հեռախոսահամարը, ապա հաստատեք այն:



Ուշադրություն՝

Հաղթողների հետ կապ հաստատելու նպատակով պահանջվում է տրամադրել հեռախոսահամար: **Ձեր հեռախոսահամարը կմնա գաղտնի և չի հրապարակվի:**

Քայլ 6. ԿԿՀ Մրցույթ

Նույնականացման փուլն անցնելուց հետո վերադարձեք գլխավոր էջ՝ սեղմելով տնակի վրա: Աջ կողմի վերևի հատվածում կտեսնեք մրցույթի նկարը (տե՛ս նկարում) և մրցույթի մեկնարկման ժամանակի հետադարձ հաշվարկը:

Ուշադրություն՝ մրցույթի նկարը կհայտնվի գլխավոր էջում **ս.թ. նոյեմբերի 16-ին 13:00 - ին՝** ցույց տալով մրցույթի մեկնարկի հետադարձ հաշվարկը, իսկ մրցույթը կմեկնարկի **ս.թ. նոյեմբերի 20-ին**:

Ուշադրություն՝

Յուրաքանչյուր մասնակցի տրվում է **300 բանալի**: Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է նվազագույնը **150 բանալի**:
Հավելյալ 150 բանալիները կարող եք օգտագործել փուլերը կրկնակի անցնելու կամ հուշումներ ձեռք բերելու համար:

Հիշեցում՝

Բանալիների սպառման դեպքում անհրաժեշտություն կառաջանա ձեռք բերել նոր բանալիներ: